

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԶԻՉՅԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Երկլեզու լսարաններում օտար լեզվի դասավանդումը պահանջում է յուրահատուկ մոտեցում, քանի որ ուսուցումը բարդ ճանաչողական պրոցես է¹, որի ժամանակ միշտ պետք է հաշվի առնել մի կողմից, թե ի՞նչ և ինչպե՞ս ենք մատուցում, իսկ մյուս կողմից՝ թե ո՞ւմ ենք մատուցում, քանի որ մենք օտար լեզու դասավանդում ենք երկլեզու լսարաններում, որտեղ այս կամ այն երևույթի ուսուցման գործում հավասարապես կարող է ազդեցություն ունենալ թե՛ մեկ և թե՛ մյուս լեզուն կախված այն բանից, թե որ լեզվում են այդ երևույթի վերաբերյալ գիտելիքներն ավելի խորն արմատացած՝ հայերենի, ռուսերենի թե անգլերենի: Հայերենը ուսանողի մայրենի լեզուն է, որի հետ նա առչվում է կյանքի բոլոր բնագավառներում՝ և լսում է, և կարդում, և օգտագործում: Մայրենի լեզվի վրա, ինչպես Շչերբան² է առաջարկում պետք է հիմնվել օտար լեզվի դասավանդման պրոցեսում, որը թույլ կտա մեզ մի կողմից օգտագործել մայրենի լեզվի ուսանողի ձեռք բերած գիտելիքները իսկ մյուս կողմից կանխատեսել սխալվելու պահը և միաժամանակ նեղացնել մայրենի լեզվի բացասական ազդեցության սահմանները: Ռուսերենը ուսանողը սովորում է դպրոցում, բուհում, այն շատ չի օգտագործվում խոսքում, բայց շատ լսում է հեռուստացույցով, ռադիոյով: Անգլերենն այն լեզուն է, որը նա ընտրել է իր համար որպես մասնագիտություն, սովորել դպրոցում, մայրենի լեզվի և

¹ А.С. Выготский. Избранные психологические исследования "Мышление и речь" Изд. АПН РСФСР, 1956. А.А. Леонтьев. Язык, речь, речевая деятельность М. 1969.

² Л.В. Щерба. Преподавание иностранных языков в школе, общие вопросы методики М-Л 1976.

ռուսերենի հետ մեկտեղ և այդ լեզուն նա նույնպես կարողում է քիչ, եթե դա պարտադիր չէ, և լսում է քիչ հեռուստատեսության CNN ալիքով, Cinemax-ով:

Փորձը ցույց է տալիս, որ այս լեզուները կարող են ունենալ ինչպես դրական, անյայն էլ բացասական ազդեցություն, և այդ ազդեցությունն ավելի շատ զգացվում է քերականության և հնչյունաբանության դասավանդման ընթացքում:

Այստեղ քննարկվում է քերականության դասավանդման հարցը:

Քերականությունը լեզվի այն ասպեկտն է, որը մի կողմից գիտելիք է տալիս երևույթի մասին, իսկ մյուս կողմից՝ սովորեցնում է, ինչպես ճիշտ դասավորել բառերը, օգտագործելով քերականական այս կամ այն երևույթը՝ այսինքն սովորեցնում է ամրացնել ձեռք բերած գիտելիքները և օգտագործել:

Այստեղ է, որ զգացվում է դասավանդողի կարևոր դերը ուսուցման պրոցեսում, քանի որ վերջինս է, որ կազմապերպում և ղեկավարում է ուսուցման պրոցեսը՝ հիմնվելով իր մանկավարժական փորձի վրա, աշխատելով ավելի արդյունավետ դարձնել ուսուցման բարդ պրոցեսը և յուրահատուկ հետաքրքրություն առաջացնել քերականության, քերականական որևէ երևույթի նկատմամբ: Քերականությունը պետք է ոչ թե անգիր անել, այլ հասկանալ, իսկ դա կօգնի լավ ըմբռնել դիտարկվող նյութը: Քերականությունը լեզվի այն բաժինն է, որի նկատմամբ պետք է լինի գիտակցական մոտեցում, որը սակայն չի նշանակում, որ ուսանողը միայն պետք է տեսական գիտելիքներ ձեռք բերի, այն էլ անգիր սերտելով, առանց հասկանալու, իսկ սա նշանակում է, որ դասախոսը մշտական պայքարի մեջ է մտնում սերտողական, մեխանիկական ուսուցման դեմ, զարգացնելով ուսանողի ինքնուրույնությունը, վերացական մտածողությունը, հիշողությունը:

Նույնքան կարևոր է ուսանողին սովորեցնել գիտակցաբար ձեռք բերածի գործնական կիրառումը բանավոր և գրավոր խոսքում:

Այս պրոցեսը պետք է հետևողական բնույթ ունենա թե՛ դասախոսի և թե՛ ուսանողի համար:

Քերականական երևույթների օգտագործման հմտություններն ու կարողությունները ձևավորվում են հիմնականում առաջին-երկրորդ կուրսերում, որտեղ ուսանողը սովորում է գործածության համար բարդ քերականական

երևույթներ՝ բայը՝ նրա կերպաժամանակային և եղանակային ձևերը: Լավ հիմքը կայուն գիտելիքների երաշխիքն է: Ուստի սկզբնական շրջանում շատ կարևոր է քերականական նյութի բացատրումը լսարանում, որն առաջին-երկրորդ կուրսի ուսանողներին հանգեցնում է գիտակցական մոտեցման: Բայց դրա հետ մեկտեղ պետք է զարգացվի ուսանողի մոտ ինքնուրույն աշխատելու կարողությունը և ստեղծվի աշխատելու շահագրգռվածություն: Ինքնուրույն աշխատելով՝ վերջինս կսովորի հաղթահարել դժվարությունները, յուրահատուկ ակտիվություն կցուցաբերի ձեռք բերած նյութի համակարգման ժամանակ, ստեղծագործական մոտեցում կցուցաբերի ուսման պրոցեսում և հետաքրքրությունը կկենտրոնացնի ոչ թե զնահատականի, այլ գիտելիքների նկատմամբ:

Հաճախ ուսանողն օգտագործում է նախադասություններ իր գրավոր և բանավոր խոսքում, բայց չի գիտակցում նախադասության հետ կապված երևույթները՝ չի օգտագործում ճիշտ ենթական, ճիշտ բայաձևը, չի ընտրում ճիշտ ժամանակաձևը, կամ ճիշտ ժամանակի ցուցիչը, չի օգտագործում կամ բացակայում է ճիշտ համաձայնեցումը ենթակայի և ստորոգյալի միջև: Չպետք է մոռանալ որ մեր ուսանողը այն դպրոցականն է, որը մայրենի լեզվի քերականությունը անցել է 6-7 դասարաններում, իսկ բարձր դասարաններում նա անցնում է միայն հայ գրականություն, այսինքն՝ քերականական նյութի բացատրության անհրաժեշտությունը թելադրվում է իրավիճակով: Անգլերենը որևէ քերականական երևույթի բացատրությունը մղում է ուսանողին զուգահեռներ տանել մայրենի լեզվի նույնատիպ երևույթի նկատմամբ և գիտակցել այն քերականական ձևը, որոնք վերջինս օգտագործում է մայրենի լեզվում:

Երբ քերականական երևույթն արդեն ներկայացվել է ուսանողին, այսինքն ուսանողը արդեն գիտի այդ երևույթի էությունը, կազմությունը /բաղադրիչները/, պետք է անցնել երևույթի գործածությանը, իսկ դա արդեն իրականացվում է նպատակային վարժությունների օգնությամբ, վարժություններ, որոնք ոչ միայն կմարզեն, այլև կավտոմատացնեն քերականական երևույթի օգտագործումը թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում: Քերականական նյութը բացատրելիս զուգահեռաբար համեմատում են երևույթները կոնտակտ լեզուների՝ հայերենի, ռուսերենի և անգլերենի համապատասխան երևույթների հետ, հիմնվելով երևույթների նման հատկանիշների վրա այդ լեզուներում և

յուրահատուկ մտեցում ցուցաբերելով այն տարբերությունների նկատմամբ, որոնք և իրենց հերթին դժվարացնում ու խոչընդոտում են երևույթի ըմբռնումը կամ նրա օգտագործումը բանավոր կամ գրավոր խոսքում:

Ինպե՞ս պետք է աշխատել նոր քերականական նյութը ուսանողին ներկայացնելուց հետո:

Հայտնի է, որ գործնական քերականության դասավանդման մեթոդները բազմազան են: Որքան շատ դասավանդող, այնքան մեթոդիկա, քանի որ յուրաքանչյուր դասավանդող աշխատում է կամ ստեղծել աշխատանքի իր ուրույն ոճը, որը ձեռք է բերվում տարիների ընթացքում, կամ էլ իր առանձնահատուկ կնիքն է դնում արդեն գոյություն ունեցող աշխատանքի ոճի վրա, որը նա ժառանգում է իր դասախոսներից կամ ընթերցած գրականությունից:

Քերականությունը լեզվի այն բաժինն է, որը պահանջում է մանրակրկիտ բացատրություն «լավ» բացատրություն, նյութի «լավ լուսաբանում», որը և երևույթի ընկալման ու գործածության լավագույն գրավականն է: Երբ ուսանողը հասկանում է երևույթը, նա պարտադիր ձևով աշխատում է այն օգտագործել իր խոսքում՝ լինի դա գրավոր թե բանավոր, մենախոսություն թե երկխոսություն: Սակայն հատկապես «լավ» բացատրությունից հետո, երբ ուսանողն անհրաժեշտ նշումներ է կատարում լսարանում, թվում է նրան այլևս ոչինչ չի մնում անելու տանը: Չէ՞ որ հիմնական նյութի բացատրությունից և տանը սովորելուց հետո նա հանգիստ կարող հենց հաջորդ օրը կամ երկու-երեք օր հետո նյութը վերադարձնել դասախոսին, և վերջինս պետք է գոհ լինի, որ իր բացատրությունը տեղ է հասել 80-90% կամ 100 % և ստացվում է, որ ուսանողին աշխատացնելու փոխարեն մենք նրան գիտակցաբար կանգնեցնում ենք ծուլության կամ անգործության ուղու վրա:

Եվ ի՞նչ անել, որ ուսանողը չբավարարվի լսարանում ձեռք բերածով և շարունակի աշխատել երևույթի վրա տանը, ձեռքը վերցնի քերականության այն դասագրքերը, որոնք նախատեսված են տվյալ կուրսի համար, և սովորի աշխատել գրքով, որը կարևոր պայման է կրթություն ստանալու ճանապարհին:

Փորձը ցույց է տալիս, որ նույն ուսանողը արդեն չորրորդ կուրսում պետք է անգլեերեն լեզվի որևէ ասպեկտից՝ քերականությունից, հնչյունաբանությունից, բառագիտությունից կամ որևէ այլ մասնագիտական առարկայից

կուրսային աշխատանք գրի, իսկ հինգերորդ կուրսում՝ դիպլոմային աշխատանք, որի հիմքում հիմնականում ընկած է լինում կուրսային աշխատանքը /այսինքն՝ դիպլոմային աշխատանքը կուրսային աշխատանքի ավելի ընդլայնված, ավելի կատարելագործված տեսակն է/, և հաճախ այդ նույն ուսանողը չգիտի ինչպես անհրաժեշտ ինֆորմացիա քաղել գրքից:

Կարծես կանգնեցինք փակուղու առաջ, բայց ելք միշտ էլ կարելի է գտնել և ստիպել ուսանողին չբավարարվել լսարանում ձեռք բերածով և *ինքնուրույն աշխատանք* կատարել, որը պետք է վերջինիս օգնի խորացնել այս կամ այն երևույթի մասին գիտելիքները ինչպես նաև սովորեցնել գրքով աշխատել, գրել ու ձևակերպել կուրսային կամ դիպլոմային աշխատանքը:

Այսպիսով, լսարանում ծրագրած նյութը բացատրելիս կարիք չկա քացատրել երևույթն իր բոլոր գործածության դեպքերով, կարելի է բաց թողնել որոշակի ինֆորմացիա, հատկապես այնպիսին, որը վերաբերում է նյութի ավելի հեշտ ըմբռնելի մասին, այսինքն՝ երևույթի նմանություններին կոնտակտ լեզուներում, իսկ ուսանողին անհրաժեշտ է զգուշացնել, որ դասախոսը գիտակցաբար բաց է թողնում որոշակի ինֆորմացիա, և ոչ այն պատճառով, որ չգիտի այդ բաժինը, այլ որ այդ ինֆորմացիան ուսանողն *ինքը* պետք է փնտրի ու գտնի, *ինքը* պետք է լրացնի և, որ յուրաքանչյուր «նոր» ինֆորմացիայի համար վերջինս կստանա ավելի բարձր միավոր, քան՝ կստանա լսարանային նյութը անգիր վերարտադրելու համար, և որքան շատ «նոր» ինֆորմացիա նա գտնի, այնքան ավելի «բարձր» միավորներ կստանա:

Այսպես օրինակ անգլերենի Present Indefinite ժամանակաձևը քացատրելիս անհրաժեշտ է սկսել իմաստից, որ Present Indefinite ժամանակաձևը արտահայտում է ընդհանրապես ներկայում կատարվող գործողություն՝ I watch TV in the evenings: Այս ժամանակաձևին հայերենում համապատասխանում է է ներկա (անորոշ) ժամանակ, իսկ ռուսերենում *настоящее время*, որոնք գործածության ավելի լայն շրջանակներ ունեն, քանի որ մի կողմից արտահայտում են ընդհանրապես ներկայում կատարվող գործողություն և, մյուս կողմից այս պահին (հիմա) կատարվող գործողություն: Վերջինս անգլերենում արտահայտվում է Present Continuous –ով, իսկ սա նշանակում է, որ հայերենից կամ ռուսերենից թարգմանելիս ուսանողը նախ պետք է

գործողության կատարման ժամանակի վերաբերյալ իրեն հարց տա հիմա՞ թե ընդհանրապես և իր պատասխանին համապատասխան ընտրություն կատարի Present Indefinite–ի Present Continuous–ի միջև:

Present Indefinite–ի կազմությունը բացատրելիս պետք է նշել, որ տարբերում են կցական և վերլուծական լեզուներ և որ այս առումով անգլերենը կցական լեզու է, ռուսերենը՝ կցական իսկ հայերենը վերլուծական և անշուշտ այս տարբերությունը կաշխատի իր կնիքը դնել Present Indefinite–ի կազմության վրա:

Կարող ենք կանխատեսել և փորձն էլ ցույց է տալիս, որ ուսանողը վերլուծական հայերենի կազմության ազդեցության տակ օգտագործում է **am** write, **are** write, **is** write, ռուսերենի և անգլերենի ազդեցության տակ կազմում է I writes, he write սխալ ձևերը, իսկ Present Indefinite–ի հարցական և ժխտական ձևերը կազմելիս թույլ են տալիս I go?, Does I go?, Do he go?, I doesn't go, he don't go սխալ ձևերը: Ըստ դասախոսի հայեցողության Present Indefinite–ի գործածության մասին խոսելիս կարելի է նշել գործածության դեպքերից մի քանիսը և բաց թողնել նրանցից երկուսը–երեքը և հանձնարարել ուսանողին, որ սովորի բացատրածը և պարզի, թե գործածության որ դեպքերը չեն բացատրվել դասախոսի կողմից (իսկ դա արվում է մեկ նպատակով՝ ուսանողի մոտ շահագրգռվածություն ստեղծել ինքնուրույն աշխատել, զարգացնել վերացական մտածողությունը, հիշողությունը, սովորել ընտրել, համակարգել և գիտակցաբար օգտագործել):

ա/ հաճախականության որևէ մակբայ կամ մի շարք մակբայներ, որոնք օգտագործվելով լիիմաստ բայաձևի հետ, վերջինիս տալիս են կրկնվող բնույթ,

բ/ գործածության այն դեպքը, որ Indefinite ժամանակաձևը արտահայտում է իրար հաջորդող գործողությունների շարք:

գ/ կամ Indefinite ժամանակաձևին բնութագրող որևէ այլ ինֆորմացիա:

Ինչի՞ մասին խոսել և ի՞նչը բացատրել կախված է նախ կոնկրետ նյութից, դասավանդող դասախոսից, ինչպես նաև լսարանից:

Տնային աշխատանքի համար ուսանողին պետք է հանձնարարել գտնել անհրաժեշտ ինֆորմացիան ծրագրով նախատեսված ամենագործածա-

կան 5-6 դասագրքերից,¹ որոնք մատչելի են գրադարանում կամ ընթերցասրահում:

Սա իր հերթին բարձրացնում է բաց թողած ինֆորմացիան գտնելու շահագրգռվածությունը:

Որպեսզի ուսանողը բարձր միավոր ձեռք բերի, նա սկսում է աշխատել, փնտրելով գտնել դասախոսի կողմից բաց թողած ինֆորմացիան, և որպեսզի գտնի այն, նա սկսում է աչքի անցկացնել առաջին գիրքը, երկրորդը, երրորդը, և հաճախ առաջին անգամից չգտնելով «բաց թողած»-ը նա սկսում է երկրորդ, երրորդ և ավելի անգամներ աչքի անցկացնել գրքի անհրաժեշտ բաժինը մինչև որ գտնի «նորը»: սա էլ իր հերթին յուրովի զարգացնում է ուսանողի վերացական մտածողությունն ու հիշողությունը՝ հատկապես տեսողականը: Բարեխիղճ ուսանողը պարտադիր աչքի է անցկացնում բոլոր վերոհիշյալ գրքերը և գտնում է ոչ թե պայմանականորեն «բաց թողած» և կամ ք կետը, այլ շատ ավելի մանրամասներ և չմոռանալու համար նշումներ է անում և լսարանային նյութը լրացնում «նորով», սովորում է ձևակերպել իր միտքը: Լսարանում ուսանողից մեծ ուշադրություն է պահանջվում, որ լսի պատասխանող ուսանողին և պարզի, թե «հնից» ի՞նչը ասվեց, ի՞նչը չասվեց և որ «նոր»-ից ի՞նչ չասվեց, ի՞նչ ասվեց, և չմոռանալու համար մտքում անընդհատ կրկնում է նյութը, իսկ սա իր հերթին ավելի է աշխուժացնում ուսանողին և նաև դասը, քանի որ ակտիվանում են բոլորը անխտիր՝ ուժեղ թե թույլ, և երբ վերջինիս ներկայանում է պատասխանելու պատեհ առիթ, նա աշխատում է ոչինչ բաց չթողնել, իսկ եթե անգամ բաց է թողնում, այդ դեպքում լրացնում են մյուսները, իսկ եթե կրկնվում է արդեն ասվածը, բոլորը միաբերան նկատում են, որ այդ մասին արդեն խոսվել է: Արդյունքն ավելի քան գոհացուցիչ է:

Իսկ եթե գտնվում է «անբարեխիղճ» ուսանող, որը լրիվ չի գտել «բաց թողած»-ը, նա անմիջապես աշխատում է գրի առնել այն, ինչի կողքով ինքը պարզապես անցել է, չի նկատել, կամ էլ չի հասկացել, որ խոսքը հենց դրա մասին է:

¹ Կառուցանակայայի, Գանշինա-Վասիլևսկայայի, Գորդոն-Կոիլովայի, Կոբրինայի, Թոքմաշյանի, Թոմսոն Մարտինեի, Մըրֆիի, Սվոնի, Ալեքսանդրի դասագրքերը:

Ուսանողը սկսում է հասկանալով աշխատել, գիտակցաբար աշխատել և զուգահեռ հետաքրքիր հարցեր է տալիս:

Անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելուց հետո սկսվում են կարողություններ և հմտություններ ձեռք բերելու, նրանց մարզման ու ավտոմատացման աշխատանքները, որին կարելի է հասնել վարժությունների և խոսքի զարգացմանը նպատակաուղված այլ տիպի աշխատանքների օգնությամբ:

Բավարարվելով այսքանով, ուսանողին կարելի է կիսամյակի վերջում հանձնարարել փոքրիկ կուրսային աշխատանք գրել որևէ ժամանակաձևից և հանձնել քննությունից 10-15 օր առաջ, աշխատանք, որն ամշուշտ կտարբերվի 4-րդ կուրսեցու կուրսային աշխատանքից նրանով, որ առաջին կուրսի ուսանողը կտա միայն գրքային ինֆորմացիա, բայց չի կարողանա հայտնել իր սեփական կարծիքը այդ երևույթի վերաբերյալ, բայց չի բացառվում նաև հակառակը և դրա հետ մեկ տեղ վերջինս կսովորի գրել և ձևակերպել իր աշխատանքը և ներկայացնել պահանջվող ժամկետում, որը կբարձրացնի նրա պատասխանատվության զգացումը: Եվ սա պարտադիր կլինի խմբի թուր ուսանողների համար՝ անկախ ուսանողի առաջադիմությունից, որը գրավական է այն բանի, որ յուրաքանչյուր ուսանողի կարելի է հանձնարարել զեկուցում, կուրսային կամ դիպլոմային աշխատանք գրել, և նա այդ կանի պատասխանատվության մեծ զգացումով, քանի որ վերջինս արդեն հաստակ պատկերացում ունի և՛ երևույթի մասին, և՛ թե ինչպես պետք է անի, իսկ մնացածը կանի, ուղղություն կտա, կլրացնի դասախոս-ղեկավարը: Այդպիսի աշխատանք կարելի կլինի հանձնարարել ոչ միայն զերազանց առաջադիմություն ունեցող ուսանողին, այլև՝ ցանկացած ուսանողին, անկախ առաջադիմությունից: Չէ՞ որ վերջիններիս մեջ էլ կարելի է առանձնացնել խելացիներ, աշխատասերներ, հաջողակներ: